.

Սեւակեան երեկոյ՝ նուիրուած Ռուբէն Սեւակ բանաստեղծի յիշատակին

20 Յունիս 2018 , 16:42

Յունիսի 18-ին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնութեամբ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Ռուբէն Սեւակ» թանգարանում տեղի ունեցաւ Սեւակեան երեկոյ՝ նուիրուած նահատակ բանաստեղծի յիշատակին:

Միջոցառմանը մասնակցում էին Մայր Աթոռի միաբաններ, արուեստագէտներ, թանգարանի բարերար Յովհաննէս Չիլինգիրեանի դուստրը՝ Շամիր Չիլինգիրեանն իր ամուսնու՝ Յակոբ Աւագեանի հետ:

Բացման խօսքով հանդէս եկաւ թանգարանի տնօրէն Արժանապատիւ Տ. Սեւակ քահանայ Սարիբեկեանը, այնուհետեւ արեւմտաեւրոպական ու հայ կոմպոզիտորների ստեղծագործութիւնների կատարումներով հանդէս եկան Ղազարոս Սարեանի անուան լարային քառեակը եւ «Նաիրեան» վոկալ անսամբլը: ՀՀ վաստակաւոր արտիստ Գրետա Մէջլումեանն ասմունքեց Ռուբէն Սեւակի բանաստեղծութիւնները:

Հանդիսութեան աւարտին ներկաներին իր օրհնութիւնն ու պատգամը բերեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ անդրադառնալով Մայր Աթոռում Ռուբէն Սեւակի անուան թանգարանի հիմնադրմանը եւ թանգարանի բարերար Յովհաննէս Չիլինգիրեանի այն երազին, որ թանգարանի իւրաքանչիւր այցելու հաղորդ դառնայ այն մեծագոյն ողբերգութեանը, որ վերապրել է մեր ժողովուրդը անցնող դարասկզբին, որպէսզի Ռուբէն Սեւակի եւ իր գրչակից ընկերների պատմութիւնը հասանելի դառնայ իւրաքանչիւրին:

Վեհափառ Հայրապետը խօսեց Ռուբէն Սեւակի լուսաւոր կերպարի մասին, որով կրթուել եւ կրթւում են սերունդներ: Սեւակի ոգին, ըստ Նորին Սրբութեան, դրսեւորուեց նաեւ արցախեան գոյամարտի

օրերին, եւ իւրաքանչիւր նման քաջագործութեամբ նորովի են ապրում հայոց ազգի արի սուրբ նահատակները, որոնք յաւէրժութեան ճամփորդ դարձան հերոսութեամբ եւ իրենց անձերի նահատակութեամբ:

Այս առիթով Ամենայն Հայոց Կաթողիկոսն երախտագէտ սրտով վերստին շնորհակալութիւն յայտնեց բարերարի ընտանիքին՝ հայ ժողովրդին յիշատակի նման գեղեցիկ անկիւն պարգեւելու համար, ուր այցելուները ոչ միայն ծանօթանում են Սեւակի կայնքին ու ժառանգութեանը, այլեւ ճանաչում նրա ոգին:

Մայր Աթոռի Ղազարապատ կոչուած պատմական շէնքում տեղակայուած թանգարանը բացուել է 2013 թ. սեպտեմբերի 10-ին: Թանգարանում ցուցադրւում են նահատակ բանաստեղծ, արձակագիր եւ բժիշկ Ռուբէն Սեւակին պատկանող անձնական իրեր ու փաստաթղթեր, պատմական սրբազան ցուցանմուշներ, ածխանկարներ եւ հայ արուեստի արժէքաւոր գործեր, ինչպէս նաեւ արեւմտահայ նկարիչների բացառիկ եւ արժէքաւոր շուրջ 200 կտաւներ՝ Մայր Աթոռին նուիրաբերուած ֆրանսահայ Յովհաննէս Չիլինգիրեանի կողմից:

Սեպտեմբերին թանգարանը կտօնի իր հնգամեակը: Այդ կապակցութեան կսահմանուի Ռ. Սեւակի անձին, կեանքին եւ ժառանգութեանը նուիրուած Սեւակեան մրցանակ, որը շնորհուելու է մշակոյթի, արուեստի, գրականութեան եւ երաժշտութեան ասպարէզում արձանագրուած ձեռքբերումների համար: